

տինոս պապը որ սահմանափակ մէկն էր և անտեղեակ էր եկեղեցական վէճի իսկական պատճառներին, քրիստոնէութեան առաջի գահի ծանրակշիռ հեղինակութիւնը դրեց իւրեղի կշռի նժարի վրայ: Ժողովը սկսեց իւր դործերը և չապասեց որ դային արեւելքի եպիսկոպոսները որոնք հակուած էին Նեստորի կողմը և ոչ էլ ուշադրութեան առաւ կայսերական ներկայացուցչի ընդդիմութիւնը: Նեստորին հրատարակեցին պաշտօնից զրկուած: Սակայն երբ հասաւ Յովհաննէս Անտիոքացին, երկրորդ ժողով գումարեցին կայսերական իշխանութեան համաձայնութեամբ, սորա էլ պաշտօնազուրկ արին իւրեղին և Մեմնոն Մփեսացուն: Բայց հոգեւորականութեան և ժողովրդեան ահազին բազմութեան տրամադրութեան առաջ սաստիկ թուլացան թէ՛ կառավարութիւնը և թէ՛ Անտիոքի եպիսկոպոսը, իւրեղին դուր գալու համար, որը չէր խնայել արքունիքի ազդեցիկ անդամներին դրամական նուէրներ տալու, զոհեցին Նեստորին, նա մեռաւ արքորում: Ասորական հոգեւորականութիւնը միութեան դաշն կապեց Եգիպտոսի պատրիարքի հետ և այն էլ այնպիսի պայմաններով, որի տակ կարող էր ստորագրել՝ առանց խղճի խայթի նաև նոր հռովմէական պատրիարքը, որը ենթարկուել էր նզովքի: իւրեղի բազմաթիւ վկայութիւնները, որով նա փորձել է պաշտպանել այդ միութիւնը, ցոյց են տալիս նրա դաւանաբանական շփոթութիւնը և ապացուցանում են բացարձակապէս, որ Աղէքսանդրիայի մեծ եկեղեցականի համար այնքան հաւատը նշանակութիւն չունէր, ինչքան իշխանական իրաւունքը: Եւ իսկապէս այդ հոգեւորական փարաւոնը տէրութեան մէջ ամենազօրեղ մարդն էր դարձրել, մայրաքաղաքում եկեղեցական բարձր պաշտօնները ղեկավարում էին նրա արբանեակները: Տէրութիւնը ծանր պարտութիւն էր կրել— և այդ տեսնում էր ամեն ոք— և այդ պատահում է ամեն անգամ, երբ բիւրոկրատիան որը հաւատի դործերում իսկապէս անտարբեր է, փորձում է կռուել զաղափարի ներկայացուցիչների դէմ, ինչպէս է եկեղեցին: Այնպէս էր երևում որ կարծես, հոգեւորական տիեզերական իշխանութեան ղեկը պէտք է անցնէր ս. Մարկոսի յաջորդին: Եւ երբ 449 թ. փոքր Ասիայի եպիսկոպոսները

մէկը՝ Աղէքսանդրիայի պատրիարքին տիեզերական եպիսկոպոս հռչակեց, դրանով նա իսկապէս հպատակուեց իրապէս գոյութիւն ունեցող պայմաններին:

(Շարունակելի):

Մեարոպ վարդապետ.

ԳՐԱԽՈՍՏՈՒԹԻՒՆ.

BOHTAN.

Eine topographisch—historische Studie von Martin Hartmann. Pankau. Տեղագրական—պատմական ուսումնասիրութիւն Մարտին Հարտմանի:

Գերմանիայում 1896-ին կազմուել մի ընկերութիւն „Die Vorderasiatische Gesellschaft“—«Առաջաւոր—Ասիոյ ընկերութիւն» անունով, որի նպատակըն է Առաջաւոր Ասիան յուշարձանների հիմամբ ուսումնասիրել, Ընկերութիւնը իւր անդամների գիտական երկերը պիտի հրատարակէ տետրակներով, որոնք երկար շարադրութիւններով ինչպէս և կարճ նկատողութիւններով, պիտի լուսաբանեն շատ խնդիրներ, Այլ և ընկերութիւնը կամենում է յառաջ բերել և նոր նիւթեր ճարելու ձեռնարկողներ և պաշտպանել նոցա:

Մեր տարաբառ երկիրն ևս Առաջաւոր Ասիոյ մասն է կազմում, որ իւր անցեալով և չարաբաստիկ ներկայով զրաւել է վաղուց ի վեր գիտական աշխարհի ուշադրութիւնն իւր վերայ, ուստի բնական է, որ այս ընկերութիւնն առանձին կերպով հետաքրքրուի նորան ուսումնասիրելու:

Դեռ անցեալ տարի ընկերութեան հրատարակութիւններից մինն էր յօդուածիս ճակատին դրօշմուած գրքի մի տետրակը, իսկ այս տարի միւսը, որոնք մի ամբողջութիւն, մի գիրք են կազմում 163 էջից. (Ա. տետրակը 1—60 էջ. Բ. 71—163), որի հեղինակը Մարտին Հարտմանն, Բեռլինի արեւելեան լեզուների դպրանոցի արաբերէնի ուսուցչապետ, ընկերութեան նախագահն է:

Բոհտանը մի վարչական միութիւն չէ, այլ ժողովրդական անուն մի գաւառի, ուր բնակուում են Բոխտ կոչուած քիւրդերը, Թուրքերն ամենայն ժամանակ միտումն են ունեցել ժողովրդի մէջ գործածական դարձած գաւառների անունները փոփոխել, բայց Բոհտանն այն անուններից մինն է, որ ցարդ պահպանուել է, Թէպէտ և Ալխալիդին ասում է, որ Բոհտանը Սղերդի լեզույութեան գաղաններից մինն է, սակայն այդ ճիշդ չէ, գաւառների ժողովրդական և վարչական անունները միշտ ձյուրեւումք մի և նոյն երկիրը չեն նշանակում կամ, ինչպէս ասում է, միմեանց չեն

ծածկում. (տետրակ 1. էջ 1. և էջ 51). Ուստի յարգելի հեղինակն այսպէս է որոշում Բոհտանի սահմանները՝ հիստից Բոհտան—սու (Հիրուան), արևմուտքից Տիգրիս (Տուր—արդին), հարաւից Խարուր կամ սորա հովիտը (Զախո), արևելքից Բոհտան սուի և Խարուրի ակունքների հողերը. (ուրեմն Հէկքիարի):

Բոհտանը մի անկանոն եռանկիւնի է կազմում որի հիմքն է Բոհտան—չայը. Բոհտանը իւր ծաղկեալ ժամանակ պէտք է 300 գիւղից աւելի ունեցած լինի, այժմ պակաս է. Ա. տետրակում յարգելի հեղինակը մէջ է բերում այդ բոլոր գիւղերի անունները, քաղելով Ալիալիգիից, արաբացի աշխարհագրներից, Հերէֆէգիիի Հերէֆնամէից, թրքաց պաշտօնական տարեգրներից և արևմտեան հեղինակներից, Գիւղերի անունները յիշատակելով՝ աշխատում է ցոյց տալ նոցա լեզուագիտական ծագումը, նախէները բերդերը, աշիրէթները, բնակիչները, սոցա թիւը, ամեն տեղ, անմիջապէս ցոյց տալով իւր աղբիւրները. Բ. տետրակում (II մաս) խօսում է այս գաւառի լեռների և գետերի, գետակների, իսկ վերջին (III մաս) Քուրդ անուան և ծագման մասին. Յարգելի գիտնականը Քուրդ բառը ծագած է համարում ասորեստանցւոց=քաջ բառից և հիմնուելով յունաց և հայոց հեղինակների աւանդածի վերայ հակառակ ցարդ ընդունուած համոզման Պարգուխոյ (Պարգու, Գորգու, Վորգու) և Վուրտիոյ (Գորգիոյ) միմեանցից զանազանում է Վարգուխները կամ հայերէն Վորգուք ապրում էին նա՛հր Դուշայի, Տիգրիսի և Խարուրի սահմաններում, տարածուելով շուտով մինչև Բոհտան սու, ուրեմն ասենք հայոց Վորգուք աշխարհը, այն ինչ Վուրտիի (հայերէն Վորգիք վերին, միջին և ներքին, որից ըստ Անդրէասի Վորձայք անունը), ժողովուրդը շատ աւելի արևելք էր ապրում, որ քրդերի բուն հայրենիքն է, որտեղից նոքա անցան Պարսկաստան և Մարաստան, Այդ էլ ուրեմն մեր Վորձայք աշխարհն է. Սակայն և այնպէս թափառմով այս ժողովուրդները վաղուց ի վեր խառնուած են իրար, Քուրդ անունն ինչպէս այսօր այնպէս և հնումը նախատական էր. Արդաւան արքայից արքան վերջին Արշակունի Արտաշիւր Սասանեանին հայհոյում է քուրդ անուանելով նորան (տես Տաբարի):

Գրքի էջ 105—117 քննադատում է իւր նիւթի վերաբերեալ մի քանի աղբիւրների արժէքը, իսկ էջ 118—146 ուղղելիքներ և յաւելիւքներ. —

էջ 147—149 յիշուած 34 գլխաւոր գրքերի անուանց կրճատումը, որ եւրոպական և ասիական զանազան լեզուներով են, ցոյց են տալիս, որ յարգելի հեղինակը գիտնականի վայել բարեխղճութեամբ ուսումնասիրել է իւր նիւթն Ա. -ից մինչև Գ.

Վերև յիշեցինք արդէն, որ նա գրքի մէջ շարունակ մատնանիչ է անում ոչ միայն ընդհանրապէս, այլ և նոյն իսկ ամեն մի բառ անգամ թէ ինչ աղբիւրից է առնուած. Այս ասելով մենք երբէք չենք ուզում ասել, որ այս գիրքը լոկ մի հիւստուածք (compilation) կամ քաղուածք է զանազան երկերից, այլ այն՝ թէ ինչպէս նա իւր ուսումնասիրութեան վերաբերեալ բոլոր նիւթերը սկսեալ դասական անցեալից մինչև մեր օրերը եղած բոլոր անմիջական և օժանդակ աղբիւրներն աչքի առաջ է ունեցել և օգտուել. Օգտուել է նա յիւրաւի այլապէս էլ անկարելի էր, բազմադիմի աղբիւրներից, ժրջան մեղուի նման հիւթը ծծելով և խոտանը ի բաց ձգելով. Այս բանը կարելի է նկատել յարգելի գիտնականի գրուածքի համարեա ամեն մի էջում, դորա համար վկայութիւններ բերել աւելորդ է. Գրքի այնքան մանրանշնին ծանօթութիւնները, հետախուզութիւնները յիւրաւի զարմացնում են մարդուս և ապացուցանում թէ Գերմանացի լուրջ ուսումնասիրութիւնը գիտութեան ինչ թաքուցեալ գանձեր կարող է երևան հանել.

Հիացման արժանի է այն հանգամանքը, որ յարգելի գիտնականը այդքան բազմազան աղբիւրների մէջ պատահած հակասութիւնները կարողանում է ուղղել, սխալները սրբագրել, խոչ ու խուսթերը հարթել, մուծ խնդիրները լուսաբանել, շնորհիւ իւր լեզուագիտական, աշխարհագրական ծանօթութեանց և որ գլխաւորն է սրատես քննական հայեացքով, իսկ ուր որ այդ անգոր է, ինքը պարզօրէն խոստովանում է, մի խոստովանութիւն որ աւելի բարձրացնում է ճշմարիտ գիտնականի արժանիքը. Մեզ անհասկանալի մնաց միայն թէ յարգելի գիտնականը ի՞նչ հիմամբ Քսենոֆոնի յիշատակած այնչափ խնդրական Վենտրիգէս գետը Բոհտան սուի (Վաղի Ազգարմ արաբացւոց Զարմ, Հուսիմոց Զիրմա) հետ նոյնացնում է, եթէ ներքի է հեղինակին, ներքի չէ գէթ ընկերութեանը, որ այսպիսի մի գրուածք առանց farski h k hrusapակում:

Հայերիս համար առանձին՝ ուրախալի է շատ, որ մեր հայրենիքն այժմ աւելի և աւելի ուսումնասիրութեան առարկայ է դառնում, առաւել ևս, որ այդ լինում է և մեր անցեալի ու լեզուի ուսումնասիրութեան հետ զուգընթացաբար. Պ. Հարոմանն, ինչպէս մեզ անձամբ յայտնի է, և ինչպէս իւր գրքից էլ երևում է, լուրջ կերպով պարպում է հայերէնով. Վ. Վոստանեանցին գրած մի մասնաւոր նամակից իմանում ենք, որ Հարոմանը մտադիր է այժմ Վասպուրական աշխարհն ուսումնասիրել. Ի սրտէ ցանկանում ենք յարգելի գիտնականին կատարեալ յաջողութիւն.

Ս. Կ.